

զրիս վերջին ստացողը կամ տէրը եղած է գրավաճառ Յարութիւն Մարգարեան, որ իր կարգին զայն նուիրած է Երուսաղէմի «Գրքատան»:

* * *

Ձեռագրիս նկարագրութիւնը թէև տուած ենք Ս. Էջմիածնի Շոյալկաք հայագիտական ժողովածուին մէջ (էջ 48), բայց աւելորդ չենք համարիր նոյնը կրկնել այստեղ աւելի մանրամասնութեամբ:

Թուղթ՝ 373: Մեծութիւն՝ 14×10 , $1 \times 5,5$ սմ: Գրութիւն՝ միասիւն. բազմաթիւ յաւելուածներ վերևի, քովի և ներքևի լուսանցքներուն վրայ: Գիր՝ նոսր, շատ տեղեր չղագրի մօտեցած: Նիւթ՝ թուղթ: Կազմ՝ խաւաքարտ կաշէպատ: Հանգստեան՝ կազմը խանգարուած ու կազմուած ատեն եղերքները կրտրուելուն պատճառաւ լուսանցագրութիւններէն սողեր և մասեր դանակի տակ ինկած: Թղ. 328էն ցվերջ թերթերը ետև առաջ գրուած են ու թերթեր ինկած են մէջտեղերէն ու վերջէն: Թերթերը պէտք է դասաւորել այսպէս. թղ. 328ին շարունակութիւնն է թղ. 331-342, թղ. 342ին՝ թղ. 329, թղ. 329ին՝ թղ. 343-352, թղ. 352ին՝ թղ. 330, թղ. 330ին՝ թղ. 353, թղ. 353ին՝ թղ. 355, թղ. 355ին՝ թղ. 354, թղ. 354ին՝ թղ. 361-370, թղ. 370ին՝ թղ. 356, թղ. 356ին՝ թղ. 371-372, թղ. 372ին՝ թղ. 357-360: Գրիչ՝ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան: Ժամանակ՝ ՌԴԷ-ՌՃԺԱ. (= 1648-1662): Տեղի՝ մեծագոյն մասամբ Կ. Պոլիս, նաև Երուսաղէմ, Պրուսա, Ագրիանուպոլիս, Ռոտտսթոյ: Վերջին usugող՝ Գրավաճառ Յարութիւն Մարգարեան, որ նուիրած է Երուսաղէմի Մատենադարանին ի յիշատակ իր հանգուցեալ հօր՝ գրավաճառ Մարգարի: Յիշատակագրութիւն՝ Թղ. 2ա. բոլորգրով. «Այս ձեռագիրս յարութի Մարգարեան ձեռամբ կանգնի իբր